ԴՎԻՆԻ ԱՊԱԿԵՆ ԻՐԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Հ. Մ. ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ (Լենինգրադ)

Դվինը դարերի ընթացքում Հայաստանի խոշոր քաղաքական և տնտեսական կենտրոններից մեկն է եղել։ Նա պատմական ասպարեզ է իջել IV դարում և պահպանել է իր նշանակությունը մինչև XIII դարը։

Գտնվելով արևելքի և արևմուտքի տարանցիկ առևտրական ճանապարհի հանգուցակետում, կարճ ժամանակում Դվինը դառնում է միջազգային առևտրի կենտրոններից մեկը։ Բնական է, որ զարգացող առևտրին զուգընթաց Դվինում բարգավաճում է նաև արհեստագործությունը։ Հայկական, հունական և արաբական գրավոր աղբյուրները բազմաթիվ տեղեկություններ են տալիս Դվինի պատմական անցյալի, քաղաքական անց ու դարձի և տնտեսական կյանքի զանազան բնագավառների ուսումնասիրության համար[1]։ Սակայն այդ գրավոր աղբյուրները միևնույն ժամանակ շատ քիչ տվյալներ ունեն քաղաքի արհեստագործության ուսումնասիրության համար։ Չկան հիշատակություններ նաև Դվինի ապակեգործության մասին։ Կարելի է նույնիսկ ենթադրել, թե Դվինում ապակեգործությունը կամ իսպառ գոյություն չի ունեցել, կամ գտնվել է ցածր մակարդակի վրա և չի արժանացել ժամանակակիցների ուշադրությանը։

Դվինի պեղումները, որոնք արդեն 25 տարուց ավելի է, որ վարում է Հայաստանի գիտությունների ակադեմիան պատմ. գիտ. դոկտոր Կ. Դ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ[2], հարուստ նյութ են տալիս քաղաքի տնտեսական և արհեստագործական կյանքի շատ մութ և կնճռոտ հարցերի պարզաբանման համար։ Այդպիսի հարցերի շարքին է պատկանում և ապակեգործությունը։ Պեղումներից հայտնաբերված է ապակե իրերի մեծ և հարուստ ժողովածու՝ բազկացած տարբեր կիրառություն ունեցող բազմատեսակ առարկաներից, պատրաստված տարբեր գույնի և որակի ապակիներից։

Ապակե անոթները ըստ իրենց նշանակության կարելի է բաժանել մի քանի խմբերի՝ թասեր, գավաթներ, բաժակներ, սափորներ, սրվակներ, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին բաժանվում է բազմաթիվ ենթախմբերի, ըստ ձևերի տարատեսակների, չափերի ու այլևայլ մանրամասների։ Միայն սրվակների տարատեսակները 30-ից ավելի են։ Սրվակներից հետ չեն մնում թասերը և բաժակները։

Ապակուց պատրաստում էին պատուհանի հարթ սկավառակներ, ճրագներ, լապտերներ, ջահի թասեր, կանացի զանազան տեսակի զարդեր՝ ուլունքներ, ապարանջաններ, մատանիներ։ Մեզ են հասել նաև ապակե խճանկարի հատիկներ։

Դվինի ապակյա անոթների մեծագույն մասի ապակին լավ որակի է, թափանցիկ, վճիտ և քիմիական բարձր կայունությամբ։ Անոթների փոքր տոկոսն է միայն ենթարկվել ժամանակի ազդեցությանը՝ կորցրել իր թափանցիկությունը և փայլը կամ օքսիդացել ու հողմաբարվել։

Բազմերանգ են նաև ապակյա անոթների գույները։ Ամենահաճախ հանդիպողը կանաչն է, մուգ կանաչից մինչև բաց կանաչավունը։ Դվինում գտնված անոթների մեջ կանաչ գույնի բոլոր երանգները կազմում են 39 տոկոս, անգույները՝ 36 տոկոս, գեղինը՝ 13 տոկոս, կապույտը՝ 6 տոկոս, սևը՝ 4 տոկոս, մանիշակագույն կարմիրը՝ 2 տոկոս։

Ժողովածուի հիմնական մասն են կազմում ազատ փչման եղանակով պատրաստված իրերը։ Նրանք բազմաթիվ են, բազմատեսակ, բազմաձև, պատրաստված տարբեր տեսակի ու գույնի բարձրորակ ապակուց։ Ապակյա անոթների շուրթերի, նստուկների, կանթերի և այլ մանրամասների կատարյալ մշակումը ցույց է տալիս ապակեգործների մեծ վարպետությունը և հմտությունը։

---

1 А. Шахназарян, Двин. Ереван, 1940.

2 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։

Հայտնի են եղել ապակե անոթների պատրաստման և զարգացման այլ եղանակներ ևս։ Այսպես օրինակ. անոթները պատրաստվում էին նաև կաղապարի մեջ ձուլելով և կաղապարի մեջ փչելով։ Զարդարում էին վերագիր թելերով և հատիկներով, եթե այս դեպքում վարպետը համատեղում էր տարբեր գույնի ապակիները, ապա ստացվում էին շքեղ և գեղեցիկ անոթներ։ Ամենատարածված զարդարանքը ձեավոր կաղապարի մեջ ձուլելն էր։

Ապակյա անոթների զարդարման ամենաբարդ եղանակը հղկման և փորագրության միջոցով զարդեր ստանալն է, երբ արդեն պատրաստի սառը անոթի վրա հատուկ կտրիչների և հղկիչների միջոցով տաշում և փորագրում էին զարդանկարը։ Զարդաքանդակի այս եղանակը կախված չէր անոթի հատուկ ձևից։ Այդ դեպքում պահանջվում է միայն հատուկ բաղադրության հաստախեցի բյուրեղապակի։ Ապակյա անոթների այս խումբը հետաքրքրական է այն տեսակետից, որ տարածված է եղել ինչպես վաղ ժամանակներում, այնպես էլ միջնադարում և ունեցել է աշխարհագրական լայն սահմաններ (Եգիպտոս, Սիրիա, Իրաք, Իրան, Հայաստան, Միջին Ասիա, Հարավային Եվրոպա)։ Այս խմբի անոթների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշ ժամանակագրական և տեղագրական եզրակացությունների հանգելու։ Սառը մշակման միջոցով զարդարված անոթները Դվինում հայտնաբերվել են միջնաբերդում և կենտրոնական թաղամասում։ Նագույն օրինակներն են՝ տաշված ձվաձև կամ կլոր բլթակներով զարդարուն թասերը և սրվակները։ Այս տիպի անոթներ գտնվել են նաև Անդրկովկասի այլ հնավայրերում՝ Սամթավրո, Գառնի, Սուդագիլան, Ուրբնիսի, Ռուսթավի, այն էլ ոչ թե պատահական և հազվագյուտ նմուշներով, այլ բազմաթիվ օրինակներով։ Այս հանգամանքն էլ բերում է մեզ այն եզրակացության, որ ապակյա անոթների զարդարման այս եղանակը հայտնի է եղել Անդրկովկասում դեռևս I դարում և իր գոյությունը պահպանել է մինչև XIII դարը[3]։

Քանի որ մենք դեռ չունենք բավարար քանակությամբ քիմիական անալիզներ և այլ ճշգրիտ ու օբյեկտիվ փաստեր այս իրերի ծագումը որոշելու համար, և մեր հիմնական չափանիշը մնում է նյութի ոճական համեմատությունը, կարող ենք միայն ենթադրաբար խոսել այս անոթների ընդհանուր Անդրկովկասյան կենտրոնի, թերևս ավելի ճիշտ՝ կենտրոնների մասին։

Այս կապակցությամբ ավելորդ չէ նշել մի շատ հետաքրքրական հանգամանք։ Դվինում IX—X դդ. շերտերից հայտնաբերված են տարբեր ձևի անոթներ, պատրաստված ապակուց որակապես շատ նման վերոհիշյալ թասերի բյուրեղապակուն։ Զարդարված են այդ անոթները տարբեր եղանակներով՝ փորագիր, ձուլածո, կան նաև հասարակ անոթներ, զարդարանքներից զուրկ։ Սա ևս մի փաստ է, որը կարող է վկայել բյուրեղապակե իրերի տեղական և լայն արտադրության օգտին։

Դվինի ապակյա իրերի ժողովածուն պարունակում է նաև փորագրության այլ եղանակների նմուշներ՝ նուրբ գծային լայն և խոր ակոսով։ Ապակյա փորագրման բարդ եղանակների՝ ռելեֆ փորագրության արվեստի օրինակներ ևս կան։

Դվինի ապակյա իրերի մեծ ժողովածուի նախնական ուսումնասիրությունը արդեն հնարավորություն է տալիս ավելի համարձակ խոսել տեղական ապակեգործության գոյության փաստի մասին։

Չնայած այն հանգամանքին, որ ո՛չ Դվինում և ո՛չ էլ նրա շրջակայքում դեռևս չեն հայտնաբերված ապակեգործական արհեստանոցներ և մեզ հայտնի չէ այն միջավայրը, որտեղ պատրաստվում էին այդ նուրբ անոթները, հնագիտական հարուստ նյութի հիման վրա կարելի է եզրակացնել, որ տեղական ապակեգործները եղել են իրենց գործի հմուտ վարպետներ։ Նրանք գիտեին բարձրորակ ապակի եփելու տեխնոլոգիան, պատրաստում էին բարդ ձևերի անոթներ, զարդարում էին տարբեր եղանակներով։

Առայժմս դժվար է ճշգրիտ որոշել Դվինում ապակեգործության ծագման ժամանակը։ Եթե առաջ կարծում էին, թե IX դ. Դվինում դեռևս չկար սեփական ապակեգործություն միայն այն փաստի հիման վրա, որ կաթուղիկե եկեղեցու շրջակայքում (որը ավերվել է 893 թ. երկրաշարժից և այլևս չի վերականգնվել) գտնված է միայն տաշված և փորագիր ապակի, որի բոլոր օրինակները սխալ կերպով համարվում են միայն ներմուծված[4], ապա վերջին տարիների պեղումները ցույց տվեցին այդ տեսակետի անհիմն լինելը։

---

3 Л. А. Чилашвили, Некоторые моменты археологического исследования Урбниси, «Вестник» Гос. музея Грузии, том XXIV, 3.

4 Б. А. Шелковников, Керамика и стекло из раскопок Двина, «Труды» гос. Ист. музея Армении, том IV, Ереван, 1952.

Նույն տեղամասի հետագա պեղումները հարուստ նյութ տվեցին այդ խնդրի պարզարանման համար։ Հայտնաբերված են մեծ թվով ինչպես բյուրեղաապակուց, այնպես էլ նուրբ ապակուց պատրաստված բազմաթիվ անոթներ։ Նյութի առատություններ և ձևերի բազմազանություններ, ինչպես նաև միանման իրերի մեծ քանակը մեզ բերում է այն եզրակացության, որ IX դ. և թերևս VIII դ. Դվինն ունեցել է բարձրորակ ապակե իրերի սեփական արտադրություն։

Բնական է, որ Դվինի տեղական զարգացած ապակեգործությունը չի բացառում ապակյա իրերի ներմուծման փաստը։ Քաղաքի բնակչության հարուստ վերնախավը, հոգևոր և աշխարհիկ իշխանները, անկասկած, իրենց կենցաղում տեղական ապակյա առարկաների հետ զուգընթաց օգտագործում էին նաև այլ երկրներից բերված ապակյա անոթներ, որոնց թվում՝ բյուզանդական, պարսկական, սիրիական։ Այդ բարձրորակ և թանկարժեք իրերը հաճախ պահվում էին որպես զարդարանք հարուստ տներում և եկեղեցիներում։

Արտակարգ հետաքրքրություն են ներկայացնում ժողովածուի գունազարդ ապակու օրինակները։ Եթե փորագիր ապակյա իրերի ուսումնասիրության ընթացքում մենք հնարավորություն ունենք տարբերելու տեղական իրերը ներմուծվածներից, ապա շատ ավելի դժվար է նկարա-

զարդ և գունազարդ ապակիների նմուշների տարբերազատումը։ Բնական է, որ Դվինում գունազարդ ապակիներ քիչ են գտնված, այն էլ մեծ մասամբ բեկորներով։ Մենք դեռևս հնարավորություն չունենք խոսելու նկարազարդ ապակու տեղական լինելու մասին։ Դրա փոխարեն Դվինի ապակյա իրերի ժողովածուն կարող է պարծենալ բյուզանդական և սիրիական գունազարդ ապակիների լավագույն և հազվագյուտ նմուշներով։

Նշանավոր է կապույտ ապակյա սրվակը, որի վրա ոսկե և էմալե ներկով նկարված են զանազան զարդեր և ջութակահարի պատկեր։ Այս անոթը պատկանում է XI դարի բյուզանդական արհեստանոցների նշանավոր և հազվագյուտ նմուշների շարքին։

Մի քանի բեկորներ պատկանում են XII—XIII դդ. սիրիական Ռակկա և Հալեպ քաղաքների նշանավոր արհեստանոցների արտադրանքին։

Ինչպես արդեն վերը նշեցինք, ապակուց պատրաստում էին նաև զանազան զարդարաններ՝ ուլունքներ, ապարանջաններ, մատանիներ։ Ժողովածուն հարուստ է բազմապիսի ձևերի տարբեր գույների ապակիներից պատրաստված կանացի զարդերով։

Դվինի ապակե իրերի ժողովածուի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճշտել նաև մի շարք պատմական փաստեր։

Ինչպես հայտնի է, ալքիմիան Հայաստանում հայտնի է XIII դարից։ Նա ունեցել է կիրառական նշանակություն և լայն տարածում, օժանդակել է զանազան արհեստների կատարելագործմանը։ Հայ ալքիմիկոսները ունեցել են հարուստ կահավորված աշխատանոցներ։ Այս բոլորը մեզ հայտնում են գրավոր աղբյուրները, այսինքն այն բազմաթիվ ալքիմիական ձեռագրերը, որոնք ցավոք մեզ են հասել ուշ ժամանակի՝ XVII—XVIII դարերի ընդօրինակություններով։

Դվինի պեղումներից հայտնաբերված են ապակյա իրերի մի քանի տարատեսակներ, որոնք, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, օգտագործվել են ալքիմիկոսների աշխատանոցում։ Նրանցից մի մասն ունեցել է նեղ մասնագիտական կիրառություն, օգտագործվել է միայն քիմիկոսի աշխատանոցում, ինչպես օրինակ՝ տարբեր տեսակի և ձևի ալամբիկները. մի ուրիշ մասը ծառայել է հեղուկների թորման համար, երրորդը՝ ավելի պարզ տեսակները՝ նեղ բերան ունեցող անոթների մեջ հեղուկ նյութեր լցնելու համար և այլն։ Սրանք համապատասխանում են ձեռագրերում նկարագրված և որոշ դեպքում նկարված այդ տիպի անոթներին, միայն այն տարբերությամբ, որ բոլոր այս անոթները գտնված են IX—XII դդ. պատկանող շերտերում։ Ուստի այժմ մենք կարող ենք համոզված պնդել, որ ալքիմիան Հայաստանում տարածված է եղել արդեն IX դ.։

Այսպիսով, Դվինի ապակյա իրերի նախնական ուսումնասիրությունն արդեն հնարավորություն է տալիս պարզել միջնադարյան Հայաստանում ապակեգործության մի քանի կնճռոտ հարցեր։ Այժմ կարելի է հաստատ խոսել Դվինում IX—XII դդ. զարգացած ապակեգործական արհեստի գոյության մասին։ Ապակյա իրերի միջոցով կարելի է պարզաբանել առևտրական կապերի որոշ հարցեր, ճշտել մի շարք պատմա-կուլտուրական փաստեր, ինչպիսին է, օրինակ՝ Հայաստանում ալքիմիայի ծագման և զարգացման ժամանակաշրջանի խնդիրը։